Էվոլյուցիայի փիլիսոփայական հիմնահարցերը՝ Լյուվենի կաթոլիկ համալսարանի փիլիսոփայի դիտանկյունից. անցկացվեց միջգիտակարգային դասընթաց

ՄԱՅԻՍ 6, 2026

«Էրազմուս+» դասախոսների փոխանակման ծրագրի շրջանակում Լյուվենի կաթոլիկ (Ֆրանկոֆոն) համալսարանի գիտության և հասարակության փիլիսոփայության կենտրոնի տնօրեն, գիտության և տեխնոլոգիայի փիլիսոփա և պատմաբան Չառլզ Փենսը Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետում անցկացրեց «Էվոլյուցիայի փիլիսոփայական հիմնահարցերը» խորագրով հատուկ մեկշաբաթյա դասընթաց:

Միջգիտակարգային դասընթացի շրջանակում քննարկվեցին էվոլյուցիայի, հարմարման,

մտածողության ձևավորման, ինչպես նաև կենսաբանության և փիլիսոփայության հատման դաշտում գտնվող մի շարք այլ խնդիրների փիլիսոփայական հիմնահարցերը:

Էվոլյուցիայի տեսության պատմություն

Առաջին դասին ներկայացվեց էվոլյուցիայի տեսության ծագման նախապատմությունը, որի համատեքստում պատմական ակնարկ կատարվեց 19-րդ դարի գիտական մտքի պատմությանը: Մասնավորապես՝ հատուկ անդրադարձ կատարվեց Չ. Դարվինի կյանքին և հետազոտական գործունեությանը: Ներկայացվեցին նրա գիտական հետազոտությունների համառոտ պատմությունը և էվոլյուցիայի տեսությանը հանգելու ճանապարհը:

Երկրորդ դասի ընթացքում քննարկվեցին բնական ընտրության, հարմարման և հարմարվածության էվոլյուցիոն գործընթացները և վերջիններիս փիլիսոփայական իմաստավորման խնդիրը: Քննարկման ընթացքում անդրադարձ կատարվեց նաև այն հարցին, թե ինչ նորմատիվ և բարոյագիտական հետևություններ կարող են բխել էվոլյուցիոն տեսությունից, և ինչ սահմանափակումներ պետք է հաշվի առնել կենսաբանական բացատրություններից բարոյական եզրակացությունների անցնելիս:

Մարդկային մտածողության ձևավորման նախադրյալները

Երրորդ հանդիպման ընթացքում ուշադրության կենտրոնում էին մարդկային մտածողության ձևավորման կենսաբանական և միջավայրային նախադրյալները: Մասնավորապես պարզաբանվեց, թե ինչ դեր ունեն մարդու կենսաբանական առանձնահատկությունները և արտաքին միջավայրը մտածողության, արժեհամակարգի և վարքային օրինաչափությունների ձևավորման գործում: Քննարկման ընթացքում ընդգծվեց, որ մարդկային մտածողությունը և վարքը հասկանալու համար անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես կենսաբանական հիմքերը, այնպես էլ սոցիալական ու մշակութային միջավայրի ազդեցությունը:

Դասընթացն ավարտվեց էվոլյուցիայի փիլիսոփայական հարցերի վերլուծությունից բխող բարոյական հետևություններով: Մասնակիցները հնարավորություն ունեցան անդրադառնալու այն խնդրին, թե արդյոք մարդկային վարքի և մտածողության կենսաբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունը կարող է նպաստել հասարակության բարելավմանն ուղղված տեսական և գործնական ջանքերին:

Քննարկվող հարցերին՝ բազմակողմանի մոտեցումներ

Դասընթացը համակարգեց ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի դոցենտ Լևոն Բաբաջանյանը, որը նաև զուգահեռ ապահովեց դասընթացի հայերեն թարգմանությունը: Դասընթացին մասնակցեցին ինչպես ԵՊՀ փիլիսոփայության և

հոգեբանության ֆակուլտետի, այնպես էլ այլ ֆակուլտետների և բուհերի ուսանողներ: Մասնակիցների մասնագիտական բազմաբևեռ հետաքրքրությունները հնարավորություն տվեցին քննարկվող թեմաներին մոտենալու բազմակողմանիորեն՝ փիլիսոփայական, կենսաբանական, հոգեբանական, քաղաքագիտական և անգամ ճարտարապետական դիտանկյուններից:

Ուսանողները կարևորեցին նման ձևաչափով դասընթացների շարունակականությունը՝ ընդգծելով, որ դրանք հնարավորություն են տալիս ծանոթանալու միջազգային ակադեմիական միջավայրում քննարկվող արդիական թեմաներին, ինչպես նաև անմիջական շփում ունենալու արտասահմանյան համալսարաններում դասավանդող և հետազոտական գործունեություն ծավալող գիտնականների հետ: Դասընթացը դարձավ գիտելիքի փոխանակման, միջգիտակարգային քննարկման և ակադեմիական համագործակցության արդյունավետ հարթակ:

Արագ հասանելիություն

Ինտրանետ

E-learning

Mulberry

Էլ. դիմումներ

Հեռախոսագիրք

Registrar

Փաստաթղթեր

Հիմնական էջեր

Ընդունելություն

Կրթություն

Գիտություն

Նորություններ

Տեղեկատվություն

Հաճախ տրվող հարցեր

Թափուր հաստիքներ

Կրթական ծրագրերի որոնում

Դիմորդներին

Ուսանողներին

ԵՊՀ-ի մասին

ԵՊՀ կառավարումը

ԵՊՀ խորհրդանիշները

© Երևանի պետական համալսարան 2026

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1

(+37460) 710000 | info@ysu.am